ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» մայիսի 2025 թ. N 68-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ԷԴԳԱՐ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԷԴԳԱՐ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 3-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-001702) և լիցենզիային կից «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» (ՔՊՆ-001702-04), «Ջրամատակարարում և ջրահեռացում» (ՔՊՆ-001702-08) ու «Էլեկտրամատակարարում» (ՔՊՆ-001702-05) ենթատեսակի ներդիրների գործողության կասեցումը համարել վերացված:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

21.05.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ